ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

Տ. ՀԱՀԵ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԱՆՅԱՆ

ՈՍԿԱՆ ԵՐԵՒԱՆՑՈՒ ԿԱԶՄԱԾ ԼԱՏԻՆԵՐԵՆ ՄԻ ՏԵՂԵԿԱԳՐԻ ՀՈՒՐՋ

Դարի հայ մեծանուն վարդապետների մէջ Ոսկան Երեւանցին, բնականաբար, ընդմիշտ մնացել է իբրեւ հայ գրքի ու տպագրության մեծագույն ջատագով: Հայ տպագրության ստեղծման ճանապարհին Ոսկան Վարդապետը ճամփորդել է Արեւմտյան Եվրոպայի բազմաթիվ բնակավայրերով ու կենտրոններով, կապեր հաստատել իր ժամանակի հայտնի եվրոպացի մտածողների ու աստվածաբանների հետ: Վերջիններից ոմանք հենց Ոսկան Երեւանցուց են տեղեկացել ԺԷ. դարի երկրորդ կեսին Հայաստանյայց եկեղեցու ներքին կյանքին, վարդապետությանն ու ծիսակարգին, վանական եւ եկեղեցական համալիրներին վերաբերող խնդիրների մասին: Հատկապես պետք է ընդգծել Ոսկան Երեւանցու դերն այդ ժամանակաշրջանում Եվրոպայում Ս. Հաղորդության խորհրդի շուրջ ծավալվող վեճերի ժամանակ: Բանն այն է, որ կաթոլիկ շատ աստվածաբաններ ու արեւելագետներ փորձում էին Ս. Հաղորդության մասին Կաթոլիկ եկեղեցու դիրքորոշումը բացատրել եւ հիմնավորել Արեւելյան եկեղեցիների (իմա՛ Բյուզանդական եւ Արեւելյան Ուղղափառ) հաղորդութենական վարդապետության հիման վրա: Սակայն քչերին է, թերեւս, հայտնի, որ Ոսկան Երեւանցուն են դիմել նաեւ իր ժամանակի կաթոլիկ նշանավոր բազմաթիվ արեւելագետներ, որոնց թվում է նաեւ հռչակավոր Ռիչարդ Սիմոնը՝ եվրոպական արեւելագիտության եւ ժամանակակից աստվածաշնչագիտության հիմնադիրներից մեկը: Ոսկան Երեւանցու հետ ունեցած նրա հարաբերությունները, իհարկե, սահմանափակ են եղել, բայց եւ այնպես Հայոց եկեղեցու ներքին

կյանքին վերաբերող որոշ հարցերի մասին Սիմոնը դիմել է այդ ժամանակ Եվրոպայում գտնվող Ոսկան Երեւանցուն, որին նա ներկայացնում է (նամակում առկա ստորագրության հիման վրա, անշուշտ) իբրեւ «Ոսկան, Եպիսկոպոս Ուշավանքի եւ Կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ»[1]: Նախքան Ոսկան Երեւանցու՝ Սիմոնի հետ ունեցած առնչակցությանն ու խնդրո առարկա տեղեկագրին անցնելը՝ նպատակահարմար է, թերեւս, ստորեւ համառոտ ներկայացնել Ռիչարդ Սիմոնին եւ Քրիստոնյա Արեւելքի մասին նրա հետազոտությունների մատենագիտությունը:

Ռիչարդ Սիմոնը (1638-1712 թթ.) մեկն է ԺԷ. դարի այն հազվագյուտ եվրոպացիներից, ովքեր փորձել են Արեւելքն ու հատկապես Քրիստոնյա Արեւելքը ներկայացնել պատմության գիտական սկզբունքների համաձայն: 1662 թ. ընդունվելով Փարիզի Քարոզիչ եղբայրների միաբանություն (Oratoriens)՝ նա շուտով ցուցաբերում է բացառիկ ընդունակություններ եւ հետաքրքրություն արեւելյան լեզուների նկատմամբ: Հենց այս պատճառով նրան է վստահվում Միաբանության գրադարանում առկա՝ արեւելյան լեզուներով գրված գրքերի նկարագրությունն ու դասակարգումը: Սակայն Սիմոնն ավելի հայտնի է դառնում իր հռչակավոր «Հին Ուխտի քննական պատմություն» գրքով (1678 թ.), որի համար դատապարտվում է, վտարվում միաբանությունից եւ Փարիզ վերադառնում միայն 1694 թ.: Ռիչարդ Սիմոնի այս գիրքը դառնում է աստվածաշնչագիտության՝ իբրեւ գիտական ոլորտի առաջին տեսական ձեռնարկը: Աքսորում եղած տարիներին Սիմոնը շուտով հրատարակում է «Նոր Ուխտի քննական պատմություն» երկը եւ Նոր Կտակարանի մի թարգմանություն, որոնք նույնպես դասվում են արգելված գրքերի շարքին: Սուրբգրային իր ուսումնասիրություններին զուգընթաց՝ նա սկսում է սերտել նաեւ Հին Մերձավոր Արեւելքի լեզուները, կրոններն ու իսլամը: Բնականաբար, հանրագիտարանային գիտելիքների այս հեղեղը Ռիչարդ Սիմոնին չէր կարող չբերել Քրիստոնյա Արեւելքի գրավիչ մշակույթին ու ոգեկանությանը, որի մասին գիտելիքներն ավելի հիմնավոր դարձնելու նպատակով Սիմոնն ուսանում եւ կատարելապես տիրապետում է հին հունարենին, եբրայեցերենին, ասորերենին եւ արաբերենին[2]: Արդեն 1671 թ.

---

[1] "Histoire critique de la creance et des coûtumes des Nations du Levant", Francfort MDCLXXXIV (1684), էջ 217 (այսուհետ՝ "Histoire critique"):

[2] Ռիչարդ Սիմոնի կենսագրության ու մատենագրության մասին տես **B. Heyberger, S. Larzul**, Richard Simon, in F. Pouillon (éd.), Dictionnaire des orientalistes de langue française, Paris, 2008, էջ 900-901. **H. Margival**, Essai sur Richard Simon et la critique biblique du XVIIe siècle, Genève, 1970, էջ 7-63. **P. Auvray**, Richard Simon (1638-1712): étude bio-bibliographique, Paris, 1974:

Ռիչարդ Սիմոնը լույս էր ընծայել շատ կարեւոր գրքի մի լատիներեն թարգմանություն՝ "Fides Ecclesiae Orientalis", որի հեղինակը Ֆիլադելֆիայի հույն ուղղափառ մետրոպոլիտ Գաբրիելն էր: Արեւելագիտական ընույթի հաջորդ կարեւոր երկն իտալացի հիսուսյան միաբան Հերոնիմոս Դանդինիի «Ճանապարհորդություն դեպի Լեռնային Լիբանան» գրքի (1656 թ. իտալերեն հրատ.) ֆրանսերեն թարգմանությունն էր (1684 թ.)[3], որին Սիմոնն իբրեւ հավելված կցում է նաեւ յուրաքանչյուր գլխի վերաբերյալ դիտողություններ (remarques): Արեւելագիտության ոլորտում Սիմոնի մյուս երկու կարեւոր ձեռքբերումները հետեւյալ գրքերն են՝ «Միջերկրայքի ժողովուրդների սովորույթների ու ավանդույթների քննական պատմություն» ("Histoire critique de la creance et des coûtumes des Nations du Levant") եւ «Էդվարդ Բրերեվուդի՝ լեզուների եւ կրոնների տարբերության վերաբերյալ կատարած ուսումնասիրությունների հավելվածներ» ("Additions aux Recherches curieuses sur la diversité des langues et des religions d'Edward Brerewood", éd. Jacques Le Brun et Woodbridge John D., Paris: Presses Universitaires de France 1983): Երկրորդը մինչեւ վերջերս ձեռագիր վիճակում էր եւ հրատարակվեց միայն 1983 թ: Վերոնշյալ երկու մենագրություններն էլ ներկայացնում են Միջերկրայքի եւ Քրիստոնյա Արեւելքի վերաբերյալ Ռիչարդ Սիմոնի կատարած մանրազնին ու խորաթափանց դիտարկումների վերջնական ամփոփումը:

Մեր հոդվածի շրջանակներում մեզ առավել հետաքրքրում է Միջերկրայքի ժողովուրդների ու կրոնների մասին Սիմոնի գիրքը, որտեղ նա ԺԲ. գլխում եւ Հավելվածում բավական հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում հայերի մասին: Ի շարս իր այլ սկզբնաղբյուրների՝ Սիմոնը մատնանշում է նաեւ Ոսկան Երեւանցուն եւ հրապարակում նրա կողմից թելադրված (dictée) տվյալ ժամանակաշրջանում Հայաստանյայց եկեղեցու կաթողիկոսի իշխանության տակ գտնվող վանքերի ու եկեղեցիների մի ցուցակ:

Ռիչարդ Սիմոնի հաղորդած տեղեկությունների համաձայն՝ Հայաստանյայց եկեղեցու վերաբերյալ տվյալները նա ստացել է Ոսկան Երեւանցուց: Ահա թե ինչ է գրում ֆրանսիացի արեւելագետն իր մենագրության ԺԲ. գլխում. «Հայոց եկեղեցու ներկա վիճակի մասին ես, բազմաթիվ հանդիպումներից հետո, բավական մանրամասնորեն տեղեկացա մի հայ եպիսկոպոսից, ով ուներ Ուշավանքի եպիսկոպոսի տիտղոս եւ 1664 թ., ըստ Հայոց պատրիարքի կողմից նրան տրված հանձնարարության, Ամս-

[3] "Voyage du Mont Liban", traduit de l'italien du R. P. Jerosme Dandini par R. S. P., Nouvelle édition augmentée de la Carte des Lieux, Paris MDCLXXXIV (1684):

տերդամում նպատակ ուներ հայերեն Աստվածաշունչ հրատարակելու: Ձեռագիր հայերեն Աստվածաշնչի թանկության պատճառով, ինչը անհատ հավատացյալների առանձնական ընթերցանությանը խոչընդոտ էր դարձել, Պատրիարքը որոշել էր հրատարակել Աստվածաշունչը: Այսպիսով, Ոսկան անունով այդ եպիսկոպոսից ես ստացա համառոտ հիշատակագիր հայոց եկեղեցիների վերաբերյալ, որ ես հրատարակում եմ սույն գրքի վերջում: Ես նրան մի քանի անգամ հանդիպեցի Փարիզում, հայ ասպվածաբանությանը վերաբերող հարցերի վերաբերյալ մի քանի քննարկում ունեցա, բայց նա ինձ այդ հարցերում այնքան էլ չտպավորեց: Նա մահացել է Մարսելում[4]*, որտեղ քաշվել էր [Ֆրանսիայի] թագավորի թույլտվությամբ՝ [հայ] ազգի համար գրքեր տպագրելու»*[5]*: Վերոնշյալից կարելի է հետևյալ եզրակացությունն անել: Համաձայն ձեռքի տակ առկա տվյալների՝ Ոսկան Երևանցին 1669 թ. ամռանը Հոլանդիայից անցնում է Փարիզ եւ այստեղ մնում մինչեւ 1670 թ. ապրիլ*[6]*: Մինչ այդ, Հոլանդիայում գտնված ժամանակ, Ոսկանն արդեն առիթ ունեցել էր Ս. Հաղորդության խորհրդի վերաբերյալ Հայոց եկեղեցու դիրքորոշումը գրավոր կերպով հայտնելու Ֆրանսիացի նշանավոր աստվածաբան Անտուան Առնոյին (1612-1692 թթ.)՝ Հոլանդիայում գտնվող իր բարեկամների միջոցով, պապական նվիրակներկայացուցիչ Վան Նեերքասսել եպիսկոպոսի միջնորդությամբ, հավանաբար 1665-1666 թթ.*[7]*: Հետեւաբար, Ռիչարդ Սիմոնի հետ հանդիպումը պետք է տեղի ունեցած լինի Ոսկանի՝ կաթոլիկ աստվածաբանների հետ ձեւավորված այս հարաբերությունների շրջանակի ծիրից ներս: Նշենք, որ Սիմոնն ինքն էլ կողմնակից էր բողոքականների եւ յանսենիստների դեմ ջատագովության մեջ Արեւելաքրիստոնեական աստվածաբանական տվյալների օգտագործմանը: Ի տարբերություն Անտուան Առնոյին գրավոր կերպով տրված տեղեկագրի՝ Ռիչարդ Սիմոնի հետ Ոսկանն ունեցել է մի քանի հանդիպում, հընթացս որոնց նաեւ նրան է տրամադրել ԺԷ.*

---

[4] Ոսկան Երեւանցին մահացել է Մարսելում 1674 թ. փետրվարի 14-ին՝ ըստ Նոր տոմարի. հմմտ. **Կարապետ եպս. Ամատունի**, Ոսկան Վրդ. Երեւանցի եւ իր ժամանակը. լուսաւոր էջ մը ԺԷ. դարու հայ եկեղեցական պատմութենէն, Վենետիկ-Ս. Ղազար, «Բազմավէպ», 1975, թ. 9, էջ 215:

[5] “Histoire critique”, էջ 137: 1683 թ. գրած իր նամակներից մեկում Ռիչարդ Սիմոնը հաղորդում է հետեւյալ տեղեկությունը, թե Ոսկանը որոշ չափով տիրապետում էր լատիներենին, շատ իմաստուն մեկն էր, եւ նրա հետ ունեցած բազմաթիվ զրույցների ժամանակ ինքը բավական մտերմացել էր նրա հետ (տես “Lettres choisies de Mr. Simon”, tome second, Rotterdam MDCCIV =1704, էջ 121-122, Lettre XXII):

[6] Տես **Կարապետ եպս. Ամատունի**, նշվ. աշխ., էջ 345:

[7] Անդ, էջ 156-157. նույն հեղինակի՝ «Դաւանաբանական անտիպ էջեր ԺԷ. դարէն Ս. Հաղորդութեան խորհուրդին շուրջ», «Բազմավէպ», 1978, թ. 1-2, էջ 99-130:

դարի երկրորդ կեսին Հայաստանյայց եկեղեցու վիճակի մասին բավական մանրամասն տեղեկություններ: Այդ է վկայում Սիմոնի բացահայտ մատնանշումը[8]*: Ավելին՝ իր գրքի Հավելվածում հրատարակած Տեղեկագրի պարագային Ռիչարդ Սիմոնը հստակ բացատրում է դրա բնույթը. «Notice des Eglises qui dependent du Patriarche d'Armenie….laquelle a ésté dictée par Uscan….»*[9]*: Ցուցակը ոչ թե գրավոր կերպով է տրվել Ոսկանի կողմից, այլ թելադրվել է՝ հավանաբար մի քանի հաջորդական հանդիպումների ժամանակ: Կարեւոր խնդիր է նաեւ, թե ինչու է ցուցակը գրվել լատիներեն եւ ոչ թե ֆրանսերեն, քանի որ եթե Ոսկան Երեւանցին թելադրում էր, Սիմոնն ինքը կարող էր գրառել այն ֆրանսերենով*[10]*: Սակայն մյուս կողմից՝ ցուցակի վերջում հանդիպող՝ Ոսկան Երեւանցու կնիքն ու ստորագրությունը վկայում են*[11]*, որ, այնուամենայնիվ, տվյալ ցուցակը Սիմոնին ներկայացվել է նաեւ գրավոր՝ կնքված ու ստորագրված: Ընդհանուր առմամբ, կարելի է եզրակացնել, որ Ռիչարդ Սիմոնի տեղեկության համաձայն՝ վերջինս հանդիպել է Ոսկան Երեւանցուն, նրանից ստացել թե՛ գրավոր եւ թե՛ բանավոր տեղեկություններ հայ ժողովրդի՝ տվյալ ժամանակաշրջանի ավանդույթների ու կենցաղի, ինչպես նաեւ Հայոց եկեղեցու ներքին կյանքի եւ իրավիճակի վերաբերյալ:*

Ոսկան Երեւանցու կողմից տրամադրված Հայոց վանքերի ու եկեղեցիների ցուցակը, բացի ԺԷ. դարավերջի հրատարակությունից, ունեցել է նաեւ մեկ այլ հրատարակություն՝ այս անգամ արդեն հայ իրականության մեջ: Խոսքը լուսահոգի Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանի ջանքերով հրատարակված «Ս. Էջմիածնի Ուղեգրութիւններ» վեցալեզու (անգլերեն, իտալերեն, ռուսերեն, գերմաներեն, ֆրանսերեն, հայերեն) հատորի մասին է, որտեղ վերոնշյալ ցուցակը դրված է հավելվածում[12]*: Ցուցակը ծանոթ*

---

[8] "Je me suis informé assez exactement de l'estat present de l'Eglise d'Arménie, ayant eu plusieurs conferences sur ce sujet avec un Eveque Armenien……J'ai donc eu de cet Eveque nommé Uscam (sic !), le Mémoire des Eglises Armeniennes,….et depuis ce tems-là je l'ai entretenu à loisir à Paris…. (ընդգծումը՝ Շ. Ծ. վրդ.)". "Histoire critique", էջ 137:

[9] Անդ, էջ 217:

[10] Ֆրանսերենով է գրված միայն ցուցակի խորագիրը:

[11] "Subscripsi Uscanui Episcopui Useavanch Vardapiet, ac Vicarius generalis in Armenia, sigillumque apposui". տես "Histoire critique", էջ 229: Ոսկանի կողմից՝ նմանատիպ ստորագրություններով ու կնիքներով դավանական թղթեր առկա են նաեւ Անտուան Առնոյի երկում. "Uscanus episcopus S. Sergii in Magna Armenia", և կամ՝ "Uscanus Vardapet, qui et gratia Christi episcopus, et nuntius S. Egmiacin in parte Europae, natione Armenus, natus et nutritus in Aspaham civitate, sed tamen loco sum Erevanensis". տես **A. Arnauld**, La perpetuité de la foy de l'église catholique touchant l'Eucharistie, Paris MDCLXVII (1667), էջ 1250:

[12] "The Etchmiadzin Chronicles.....", recorded by missionaries and merchants, diplomats and scholars, with 96 colour and 176 black and white illustrations, compiled by Archbishop

է եղել նաեւ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանին (Ղեւոնդ Ալիշանի «Այրարատ» հատորի եւ "Dictionnaire de Géographie sacrée et ecclésiastique", vol. 4, par M. Bénoist, ed. Migne, Paris, 1854-1862 աշխատության միջոցով)[13]*, որը որոշակի հստակություններ է փորձել մտցնել այս ցուցակի մեջ: Օրմանյանի համաձայն՝ Ոսկանի կազմած ցուցակը չի համապատասխանում իր ժամանակի իրականությանը, սակայն, «ասով մէկտեղ այդ ցուցակը կարեւոր կը նկատուի, գոնէ ժամանակին տիրող մեծ բաժանումները, եւ նոյն ատեն գտնուող նուիրապետութեան պատկերը գիտնալու համար»*[14]*: Օրմանյան սրբազանի կարծիքով՝ Ոսկանի ապրած ժամանակաշրջանում Հայոց եկեղեցում այլեւս չկար «արքեպիսկոպոսութիւն, եպիսկոպոսութիւն եւ պատուակալ՝ վանական համալիրում նստող եպիսկոպոսութիւն» եռամասնյա կառուցվածքը: Սակայն անհրաժեշտ է նշել, որ վաստակավոր հայագետը, ծանոթանալով M. Bénoist-ի կազմած ցուցակին, հավանաբար ձեռքի տակ չի ունեցել Ռ. Սիմոնի հրատարակած այս ցուցակը եւ, առանց անհրաժեշտ համեմատության, M. Bénoist-ի հրատարակածն ընդունել է Ոսկանի տրամադրած վիճակագրության տեղ: Մինչդեռ պարզ համեմատությունն իսկ ցույց է տալիս, որ դրանք բոլորովին տարբեր ցուցակներ են, չնայած չի բացառվում նաեւ, որ M. Bénoist-ն օգտվել է Ռ. Սիմոնի կողմից հրատարակած այս վիճակագրությունից:*

Հրատարակվող բնագրի պատմաքննական ուսումնասիրությունը թողնելով մեկ այլ առիթի՝ ստորեւ տալիս ենք լատիներեն բնագիրը՝ հայերեն թարգմանությամբ եւ անհրաժեշտ ծանոթագրություններով: Լիահույս ենք, որ բացառիկ արժեք ներկայացնող այս բնագիրը լավագույնս կծառայի իր նպատակին՝ Հայոց եկեղեցու թեմական կառուցվածքի վերաբերյալ առավել ամբողջական պատկեր ունենալու առումով:

Mesrop Ashjian, Moughni Publishers, Armenia, 2003, էջ 786-790: Այստեղ, սակայն, որեւէ հիշատակություն չկա հեղինակի մասին. նշված է միայն 1684 թ. հրատարակչի անունը՝ Sr. de Moni:

[13] Տես "Dictionnaire de Géographie sacrée et ecclésiastique", vol. 1, par M. Bénoist, Paris, 1848, էջ 819-821. **Ղ. Ալիշան**, Այրարատ. Բնաշխարհ Հայաստանեայց տեղագրեաց, Վենետիկ, 1890, էջ 231:

[14] **Մ. արք. Օրմանեան**, Ազգապատում, հ. Բ., Ս. Էջմիածին, 2001, էջ 2957: Ընդհանրապես պետք է նշել, որ եվրոպական հայագիտության մեջ պատմագիտական առումով բավական մեծ հետաքրքրության առիթ են տալիս ԺԶ.-ԺԷ. դարի հայ ժամանակագրությունները: Հետաքրքիր է այս առումով բոլորովին վերջերս հրատարակված այդ ժամանակագրությունների մի մասի չեխերեն թարգմանությունը՝ "Arménské kroniky od jezera Van, XVI.-XVIII. století", vybrala, přeložila, úvodem a poznámkami opatřila Petra Koštalová, Pavel Mervart, Praha, 2011:

Ռիչարդ Սիմոն, Միջերկրայքի ժողովուրդների ավանդույթների եւ սովորույթների քննական պատմություն, Ֆրանկֆուրտ, 1684, էջ 217-229.

Notices des Eglises qui dependent du Patriarche d'Arménie residant à Egmiathin, laquelle a esté dictée par Uscan Eveque de Uscavanch, et Procureur general du Patriarche

Ոսկան Եպիսկոպոս Ուշավանեցու եւ Կաթողիկոսական ընդհանուր տեսուչի կողմից թելադրված համառոտ ցանկն այն եկեղեցիների, որոնք գտնվում են Էջմիածնում գահակալող Հայոց պատրիարքի իշխանության տակ.

1. Egmiathin, sedes Patriarchae Armenorum. Episcopatus immediate subjecti Patriarchae.

Էջմիածին. Հայոց պատրիարքի նստավայր. Պատրիարքի անմիջական իշխանության տակ գտնվող եպիսկոպոսություն:

2. Algusgvanch vel Akusvanch, Episcopatus parvus.

Աղջոց վանք[15]. փոքրիկ մի եպիսկոպոսություն:

3. Aring, Episcopatus parvus prope Ervan Archiepiscopatum: ibi etiam est Conventus unde vocatur etiam Aringshusvanch.

Առինջ. փոքրիկ եպիսկոպոսություն՝ Երեւանի արքեպիսկոպոսարանի իշխանության տակ: Այստեղ կա նաեւ վանք, որի անունն է Առինջուց վանք:

4. Bitlis apud Turcas, vel Balesch apud Armenos, in Provincia Varaspuracan Episcopatus: ibi sunt tres Conventus Monachorum S. Basilii.

Բիթլիս՝ թուրքերեն անվանումը, Բաղեշ՝ հայերենը, եպիսկոպոսություն Վասպուրական նահանգում: Այստեղ կան նաեւ Ս. Բարսեղի կանոնադրության երեք վանքեր[16]:

5. Elevard, Episcopatus antea, sed à 30. annis extinctus: Ecclesiae tamen inserviunt Sacerdotes seculares. Est in Provincia Ararath.

---

[15] Խոսքը Ս. Ստեփանոս Աղջոց վանքի մասին է: Գտնվում է Արարատի մարզում, Խոսրովի պետական արգելոցում, Գեղարդավանքից 7 կմ հարավ-արեւելք՝ լեռան լանջին: Սույն բնագիրը պատրաստելու ընթացքում հիմնականում օգտվել ենք ֆրանսիացի հայագետ-արվեստագետ Michel Thierry-ի կազմած նկարագրական ցուցակից՝ "Rèpertoire des monastères arméniens, Corpus Christianorum", Brepols-Turnhout, 1993 (ստորեւ՝ RMA):

[16] Ս. Բարսեղի կանոնադրությամբ առաջնորդվող վանքերը Հայաստանում բացարձակ մեծամասնություն էին կազմում. այս մասին տես **Տաճատ Ծ. վրդ. Եարտրմեան**, Նիւթեր հայ վանականութեան պատմութեան (ԺԴ.-ԺԷ. դար), Վենետիկ, 1989, էջ 16-17:

Եղվարդ. 30 տարի առաջ է դարձել եպիսկոպոսարան: Եկեղեցում հովվություն են անում աշխարհական երեցները[17] (Sacerdotes seculares): Գտնվում է Արարատ նահանգում:

6. Gesargel, Episcopatus magnus in Provincia Ararath prope Aring, qui est prope Egmiathin.

Գեսարգել[18]. Առինջի մոտ գտնվող մեծ եպիսկոպոսություն՝ Արարատի նահանգում՝ շատ մոտ Էջմիածնին:

7. Goscavanch, Episcopatus prope Egmiathin Provincia Ararath.

Գոշավանք՞. գտնվում է Էջմիածնի մերձակայքում՝ Արարատ նահանգում[19]:

8. Hoi, seu Coy, Episcopatus prope Salmast et Lacum magnum.

Խոյ. Եպիսկոպոսություն Սալմաստի եւ Մեծ լճի[20] մերձակայքում:

9. Johanavanch, id est, S. Joannes, Episcopatus magnus in Provincia Ararath: distat quatuor leucis[21] ab Egmiathin.

Հովհանավանք, որ է Ս. Հովհաննես՝ Արարատ նահանգի մեծ մի եպիսկոպոսություն՝ Էջմիածնից 4 ժամ հեռավորության վրա:

10. Karenus, Episcopatus et Monasterium: distat 6. Leucis ab Egmiathin.

Կարենիս. եպիսկոպոսարան եւ վանք՝ Էջմիածնից մոտ 6 ժամ հեռավորության վրա[22]:

---

[17] Խոսքն ամուսնացյալ քահանաների մասին է:

[18] Հավանաբար Գետարգել. նկարագրության համաձայն՝ Առինջի մոտ գտնվող Գետարգելի Ս. Նշան վանքն է կամ Զագավանքը:

[19] Ըստ էության, նկատի ունի Գոշավանքը, քանի որ լատիներեն տառադարձությամբ նմանատիպ այլ վանք հայտնի չէ մեր մատենագրության մեջ:

[20] Նկատի ունի Ուրմիան:

[21] Leucis- հին Հռոմում երկարության չափման այս միավորը հավասար էր մոտավորապես 1.5 հռոմեական մղոնին, այսինքն՝ 2.2 կիլոմետրի: 1674 թ. Փարիզում սահմանված չափման նոր մեթոդի համաձայն՝ մեկ լիգը կամ լյոն (lieue de Paris) հավասար էր 2.422 հռոմեական մղոնի կամ 3.898 կիլոմետրի: Այսինքն՝ Ռ. Սիմոնի ժամանակաշրջանում 1 leucis-ը կամ league-ը հավասար էր մոտավորապես 4 կիլոմետրի: Ընդհանրապես, միջնադարյան Եվրոպայում երկարության չափման այս միավորի չափանիշը մեկ ժամվա ընթացքում չափահաս մարդու անցած ճանապարհն էր, հետեւաբար այստեղ նախընտրել ենք թարգմանել հենց այդպես: Ավելի մանրամասն տես **J. B. Friedman, K. M. Figg (ed.)**, “Trade, Travel, and Exploration in the Middle Ages: An Encyclopedia”, New York 2000, art. “Measurement of Distances”:

[22] Կարենիսի Ս. Առաքելոց վանք՝ հիմնադրված Զ.-Է. դդ.: Գտնվում է ներկայիս Կոտայքի մարզի Կարենիս գյուղում, եկեղեցու աղոթարանի հիմքում զետեղված են եղել Ս. Մատթեոս եւ Ս. Անդրեաս առաքյալների մասունքները, որոնք ԺԹ. դարում տեղափոխվել են Մայր Աթոռ, որտեղ եւ պահվում են մինչ օրս. տես **Մ. Հասրաթյան**, Լուսակերտի ճարտարապետական երկու հուշարձաններ, ԼՀԳ, 1972, թ. 2, էջ 28:

11. Kiekart, Episcopatus deletus prope Egmiathin. Kiekart, id est, lancea Christi, quae erat in hac Ecclesia.

Գեղարդ. Էջմիածնի մերձակայքում գտնվող նախկին եպիսկոպոսություն: Գեղարդը Քրիստոսին [խոցած] նիզակն է, որ պահվում է այս եկեղեցում:

12. Mucni, Episcopatus novus à 90. annis: distat 4. leucis ab Egmiathin versus Septentrionem.

Մուղնի. 90 տարի առաջ հիմնադրված նոր եպիսկոպոսություն՝ Էջմիածնից 4 ժամ հեռավորությամբ դեպի հյուսիս:

13. Macaravanch, Episcopatus deletus Provinciae Altsteu: distat ab Erevan 15. leucis versus Septentrionem.

Մակարավանք. Աղստեւի գավառում՝ նախկին եպիսկոպոսություն՝ Երեւանից 15 ժամ հեռավորությամբ դեպի հյուսիս:

14. Salmasavanch, Episcopatus prope Mucni: distat 5. leucis ab Egmiathin. In hac Ecclesia olim erat perpetua psalmodia. Salmes Armeniacè est Psalmus, unde dictum est Salmasavanch.

Սաղմոսավանք. եպիսկոպոսություն Մուղնիի մերձակայքում՝ Էջմիածնից 5 ժամ հեռու: Այս եկեղեցում մշտապես սաղմոսերգություն է կատարվում** (psalmodia)**: Հայերենում** «Սաղմոս» **բառից առաջացել է «Սաղմոսավանք» անունը:

15. Tieceravanch, vel Tiekeravanch, Episcopatus: 3. leucis distat ab Egmiathin.

Դղերավանք. Եպիսկոպոսություն՝ Էջմիածնից 3 ժամ հեռու:

16. Tiplis, seu Teflis, Episcopatus. Dominatur ibi Princeps Georgianorum, in quem tamen Persae et Turcae habent aliquod Dominum.

Թիֆլիս կամ Թբիլիսի. եպիսկոպոսություն. այստեղ իշխում են վրաց իշխանները՝ ժամանակ առ ժամանակ թուրքերի կամ պարսիկների գերիշխանության ներքո:

17. Varthehair, Episcopatus deletes Provinciae Casvan sub Turcis prope Van civitatem.

Վարդեհեր. նախկին եպիսկոպոսություն Քասվան գավառում՝ թուրքերի գերիշխանության ներքո՝ Վան քաղաքի մոտակայքում[23]:

---

[23] Վարդիհոր/Վարդեհեր, Ս. Թաթուլ Գազանածակք, Թումավանք, Վանգ վանք, Դից մայր անապատ անուններով հայտնի այս վանքը (հիմն. Ե. դ.) գտնվում էր Այրարատ նահանգի Գաբեղյանք կամ Գաբեղենից հին գավառի սահմանի վրա, հետագայում Բասենյաց գավառում: Հմմտ. **Ե. Տեկանց**, Ճանապարհորդութիւն ի Բարձր Հայք եւ ի Վասպուրական (1872-1873), ձեռագիրը պատրաստել եւ ծանոթագրել է Հ. Պողոսյանը, Երեւան, 1991, էջ 81. **Հ. Էփրիկեան**, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա., Վե-

18. Virap, Episcopatus; sed vocatur Archiepiscopatus, quia habet sub se tres Conventus nempe 1. Vanstan. 2. Urzavanch. 3. Musahbiuruvanch. Distat ab Egmiathin 12. leucis versus Meridiem Orientalem, non longè à monte Ararath.

Վիրապ. եպիսկոպոսություն, ապա՝ արքեպիսկոպոսություն, որտեղ երեք վանք կա՝ Վանստան, Ուրցավանք եւ Մյուսաղբյուրուվանք[24]: Էջմիածնից 12 ժամ հեռավորությամբ դեպի հարավ-արեւելք՝ Արարատից ոչ հեռու:

19. Ouscohvanch, Episcopatus, cujus Episcopus Dominus Uskan anno 1670. qui hac mihi dictavit.

Ուշավանք** (Ouscohvanch). **եպիսկոպոսություն, որտեղ Տ. Ոսկան եպիսկոպոսն էր 1670 թ. եւ դեռ այսօր էլ համարվում է տեղի եպիսկոպոս:

Praeter hos 17. vel 18. Episcopatus Sustraganeos Patriarchatûs Egmiathin, sequentes Abbatiae aut Monasteria Ordinis S. Basilii.

Այսպիսով՝ 17 կամ 18 կից եպիսկոպոսություն ունի Էջմիածնի Ծայրագույն պատրիարքությունը[25], որոնց ստորեւ հետեւում են վանահայրությունները ու վանքերը՝ Ս. Բարսեղի կանոնադրությամբ:

1. Surb-Astuasasin, id est, Sancta Dei Genitrix in Provincia Ararath, alio nomine vocatur Niggara, quod est nomen villae, in qua erat Monasterium, & Surb-Astasasin nomen est Ecclesiae.

Սուրբ Աստվածածին. Արարատ նահանգում, այլ անունով հայտնի՝ Նիգարա, որ քաղաքի անունն է, որտեղ եւ գտնվում է վանքը, իսկ «Սուրբ Աստվածածին»-ը եկեղեցու անունն է:[26]

2. Surb Astuasincal, Monasterium etiam deletum, 2. leucis distans à Niggara.

Սուրբ Աստվածընկալ. քանդված մի վանք՝ Նիգարայից 2 ժամ հեռու[27]:

նետիկ-Ս. Ղազար, 1903, էջ 440-441:

[24] Ամենայն հավանականությամբ, այստեղ նշվող երեք վանքերը գտնվել են Արարատյան դաշտավայրում՝ Վանստանը՝ բուն Խոր Վիրապի վանական համալիրը, Ուրցավանքը՝ ներկայիս ՀՀ Արարատի մարզում գտնվող Ուրցաձորի վանքն է (տես RMA, էջ 110), իսկ Մյուսաղբյուրուվանք անվան տակ կարելի է հասկանալ Արարատի լանջին, ավանդության համաձայն, 341 թ. հիմնված Ակոռիի Ս. Հակոբ Մծբնա վանական համալիրը, որը հայտնի էր իր հրաշագործ աղբյուրով (այս մասին ավելի մանրամասն տես **Վ. Դեւրիկյան**, Նոյան Տապանի մասունքը, «Էջմիածին», 2007, Ը., էջ 34):

[25] Ս. Էջմիածնի պատրիարքական աթոռը չհաշված՝ ստացվում է 18 եպիսկոպոսություն կամ թեմ:

[26] Նիգարա՝ Բջնի, որտեղ գտնվում է 1031 թ. Գրիգոր Մագիստրոս Պահլավունու կողմից կառուցված Ս. Աստվածածին եկեղեցին (ներկայումս ՀՀ Կոտայքի մարզի Բջնի գյուղի հյուսիսային եզրին). տես RMA, էջ 119:

[27] Բջնիից դեպի հարավ-արեւմուտք 2 ժամ հեռավորության վրա է գտնվում Ս. Աստվածընկալ

Praetereà tres sunt Conventus Monialium S. Basilii in Armenia.

Ահա եւ Ս. Բարսեղի կանոնադրության միանձնուհիների վանքերը Հայաստանում՝

1. Armenaperkhich dicitur Archiepiscopatus, quia habet sub se multa Monasteria: sed vere est tantùm Episcopatus sub Egmiathin. Monasteria illa sunt Hogevanch, Masctos Vardapiet, & alia destructa.

Ամենափրկիչ, որը նաեւ արքեպիսկոպոսություն է, եւ որտեղ կան բազմաթիվ վանքեր: Ժամանակին այն էջմիածնին պատկանող եպիսկոպոսություն էր, կային Հոգեվանք, Մաշտոց Վարդապետ եւ այլ բազում վանքեր, որոնք բոլորն էլ քանդված են[28]:

2. Agulis Archiepiscopatus in Provincia Colthan prope Naxuvan, à quo distat 15. leucis versus Orientem Meridionalem. Nulllos habet sub se Episcopatus, quia sunt destruci, sed tantùm hos 5. Conventus S. Basilii, 1. Hamasravanch, Ecclesia est Surb Mesrop, 2. Bestuvanch, Ecclesia est Surb-Uscan, 3. Est Pharracuvanch, Ecclesia est Surb-Stephanus & Surb-Jacob. 4. Tsenuvanch, Ecclesia est Surb-Stephanus, 5. Est Surb-Johannes.

Գողթան գավառի Նախիջեւանում է Ագուլիսի արքեպիսկոպոսությունը՝ 15 ժամ հեռու դեպի հարավ-արեւելք: Այս եպիսկոպոսության մեջ ոչ մի վանական չի ապրում, բոլոր հինգ վանքերը Ս. Բարսեղի կանոնադրությամբ են՝

ա. Համասրավանք՝ Ս. Մեսրոպ եկեղեցիով, բ. Բեսրուվանք՝ Ս. Նշան եկեղեցիով, գ. Ֆառաչուվանք՝ Ս. Ստեփանոս եւ Ս. Հակոբ եկեղեցիներով, դ. Թելենուվանք՝ Ս. Ստեփանոս եւ Ս. Հովհաննես եկեղեցիներով. բոլոր հինգն էլ քանդված են:

3. Acthamar, seu Altamar, Archiepiscopatus in insula Lacus magni Varaspuracani. Habetur Archiepiscopus Schismaticus à Patriarcha Egmiathin & Ecclesiâ Armenâ, quia ab annis 500. & ampliùs dicit se Patriarcham contra decretum Ecclesiae Armenae. Habet sub se 8. vel 9. Episcopatus, sere omnes circa Lacum Varaspuracani & Van, nempe Sasan, Gasgi, Basti & alios, nec non aliquos Conventus. Ecclesiae verò paulatim collapsae ruinis

---

կալ եկեղեցին՝ ներկայիս Արագածոտնի մարզի Երնջատափ գյուղի մոտակայքում՝ Քասաղ գետի առափնյա փոքր բլրի վրա: Վանական համալիրի հնագույն կառույցը միանավ բազիլիկ եկեղեցի է, որը թվագրվում է Ե. դարով: ԺԳ. դարում այս հնագույն կառույցին կից վեր է խոյացել Վաչուտյան Քուրդ իշխանի մեկենասությամբ շինված խաչաձեւ գմբեթակիր եկեղեցին. տես RMA, էջ 119-120:

[28] Ս. Ամենափրկիչ Կուսանաց անապատ, հայտնի նաեւ Մալեվիվանք, Ներքին Մալեվի անապատ անունով: Հիմնադրվել է ԺԳ. դարում, գտնվում է ներկայիս Մեղրի քաղաքի մոտակայքում. տես RMA, էջ 127:

non reaedisicantur sub Turcis. Basti Episcopatus, Gasgi Episcopatus, Sasan Episcopatus. N. N. N.

Աղթամար. Վասպուրականի մեծ լճի կղզու վրա գտնվող արքեպիսկոպոսություն: Էջմիածնի պատրիարքից անջատված եւ Հայ եկեղեցում հերձվածող մի արքեպիսկոպոսություն, որ գոյություն ունի մոտ հինգ հարյուր տարի: Եվ ասում են, որ այս պատրիարքը հակառակ է Հայ եկեղեցու կանոններին: Իշխանության տակ ունի 8-9 եպիսկոպոս, որոնք բոլորն էլ Վասպուրական-Վանի լճի մոտակայքում են, ինչպես նաեւ Սավան, Գառայի, Բալթի եւ այլուր՝ առանց որեւէ այլ վանքերի: Եկեղեցին, սակայն, մի փոքր քանդված է եւ թուրքերի տիրապետության ժամանակ չի վերանորոգվել[29]: Բաստի եպիսկոպոսություն, Գասգի եպիսկոպոսություն, Սասան եպիսկոպոսություն.....[30]

4. Amenaphrcic, vel Ameniaperkhik Archiepiscopatus, id est, omnium redemptor, est Monasterium in quo Archiepiscopatûs sedes in Provincia Ararath, juxta civitatem Garni: 10. Leucis distat ab Egmiathin versus Orientem. Gubernat civitatem Erevan, quae est circiter quatuor mille domorum, à qua distat 5. leucis. Dicitur archiepiscopatus, quia habet sub se multos Conventus, Chogevanch, Masctos, Vardapeit & alios deletos : sed verè est tantùm Episcopatus sub Egmiathin.

Ամենափրկիչ. արքեպիսկոպոսություն, որ է մի վանք Այրարատ նահանգի արքեպիսկոպոսության սահմաններում՝ Գառնի քաղաքի կողքին[31]՝ Էջմիածնից 10 ժամ հեռու դեպի արեւելք: Երեւան քաղաքն էլ է նրա իշխանության տակ, որտեղից այն հեռու է 5 ժամ. Երեւանն ունի մոտ 4000 տուն բնակչություն: Նշյալ արքեպիսկոպոսության իշխանության տակ կան բազմաթիվ վանքեր՝ Զոգեվանք, Մաշտոց Վարդապետ եւ այլ ուրիշ խոնարհված վանքեր, որոնք բոլորն էլ Էջմիածնի իշխանության տակ են:

5. Bardulimeos, Archiepiscopatus, id est, S. Bartholomaeus in Provincia Hacbac: habebat olim Episcopatus sub se, qui nunc destrucit: nunc autem est Sufraganeus Archiepiscopatûs maximi Van.

Ս. Բարդուղիմեոսի վանք՝ Աղբակ գավառում: Ժամանակին այստեղ եպիսկոպոսական աթոռ կար, իսկ այժմ այն քանդված է: Ներկայումս

---

[29] Հավանաբար այստեղ կամ Ռ. Սիմոնն ինքը գրառում չի կատարել, կամ Ոսկան Երեւանցին չի հիշել անունները:

[30] Մնացած հատվածը բնագրում պակասում է: Հավանաբար Ոսկան Երեւանցին ձեռքի տակ չի ունեցել անհրաժեշտ տեղեկություն:

[31] Խոսքը Հավուց թառի 1013 թ. Գրիգոր Մագիստրոսի կողմից հիմնված Ս. Ամենափրկիչ վանքի մասին է:

գտնվում է Վան քաղաքի մեծ արքեպիսկոպոսի հոգեւոր իշխանության տակ:

6. Betchnu, vel Bgnu, Archiepiscopatus in Provincia Salcunus-Stuer, antea magna civitas, nunc destructa à Persis, octo leucis distans ab Erevan versus Septentrionem: habet sub se Episcopatus sequentes.

Բջնիի արքեպիսկոպոսություն՝ Սալկունի-Ստվեր գավառում՝ նախկինում մեծ քաղաք էր, իսկ այժմ քանդված է Պարսից ձեռքով: Գտնվում է Երեւանից հյուսիս՝ ութ ժամ հեռավորության վրա: Ունի եպիսկոպոսությունների հաջորդական շարք՝

1. Hair-Johan, vel Hairuvanch, Episcopatus in Provinicia Gelarchuni.

ա. Հայրավանք՝ եպիսկոպոսություն Գեղարքունյաց գավառում[32],

2. Kietcharvasvanch, Episcopatus in villa Proviniciae Salcunus-Stuer

բ. Կեչառիսի վանք՝ եպիսկոպոսություն Սալկունի-Ստվեր գավառում,

3. Schalvachuvanch Episcopates deleta civitas & Episcopatus: nullus Monachus superest in Conventu.

գ. Շաղվաչուվանք[33]՝ եպիսկոպոսություն, կործանված է թե՛ քաղաքը եւ թե՛ եպիսկոպոսական աթոռը, վանքում ոչ մի վանական չի մնացել:

7. Sevan, Episcopatus in Provincia Salcunus-Stuer

Սեւան՝ եպիսկոպոսություն Սալկունի-Ստվեր գավառում:

8. Karienusvanch Monasterium S. Basilii sub Archiepiscopatu Besenu

Կարենիսի վանք՝ Ս. Բարսեղի կանոնադրությամբ, նույնպես պատկանում է Բջնու աթոռին:

9. Caesarea, Archiepiscopatus Provinciae Cappadociae: habet tantum duos Suffraganeos.

Կեսարիա՝ Կապադովկիայի գավառում, արքեպիսկոպոսություն է եւ ունի երկու քորեպիսկոպոսություն (suffraganeos).

1. Surb-Astuasasin, Sta. Dei Genitrix, Episcopatus 3. leucis distans à Caesarea versus Meridiem.

ա. Ս. Աստվածածին՝ եպիսկոպոսություն Կեսարիայից երեք ժամ հեռավորությամբ հարավ.

---

[32] Վանքը Հայր Օհան անունով է նշված նաեւ Երեմիա Քյոմուրճյանի 1691 թ. կազմած քարտեզում. տես **G. Uluhogian**, Un antica Mappa dell'Armenia, monasteri e santuari dal I al XVII secolo, Longo Editore Ravenna, 2000, էջ 19-21: Հետաքրքիր է, որ հեղինակի հիշատակության համաձայն՝ այս քարտեզը նույնպես կազմվել է Մարսելիից 1691 թ. Կ. Պոլիս ժամանած Լյուդովիկոս Ֆերդինանդի խնդրանքով:

[33] Շաղուաց վանք կամ Շողագայ վանք, հիմնադրվել է 885 թ., գտնվում է ներկայիս Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի մոտակայքում՝ Զորագյուղում. տես RMA, էջ 113:

2. Hisia Episcopatus, 6. leucis versus Septentrionem distat à Caesarea: ibi etiam Monasterium Ordinis S. Basilii, quod dicitur Surb-Sargis, S. Sergius.

բ. Հիսիա՝ եպիսկոպոսություն Կեսարիայից 6 ժամ հեռավորությամբ հյուսիս: Այստեղ կա նաեւ Ս. Բարսեղի կանոնադրության մի վանք՝ Ս. Սարգիս անունով[34]:

10. Surb-Carapet, Archiepiscopatus, vel Karapiet, id est, praecursor S. Joannes, in Provincia Taron, vulgò Muse prope Bitlis. Habetsub se

Սուրբ Կարապետ, որ է Ս. Հովհաննես Մկրտիչ, Տարոն գավառում, հայտնի է Մուշ անվամբ, իսկականն է՝ Բիթլիս: Ունի հետեւյալ վանքերը՝

1. Matnavanchmscu, Episcopatus in eadem Provincia.

ա. Մատնավանք Մշո՝ նույն գավառում եպիսկոպոսական աթոռով[35].

2. Bitlis, Episcopatus in eadem Provincia.

բ. Բիթլիս՝ նույն գավառում՝ եպիսկոպոսական աթոռով[36].

11. Cpar, antè Archiepiscopatus, nunc deletus, & Provincia propè civitatem Ranni & Provinciam Sciracvam Armeniae magnae.

Սպար[37]. ժամանակավոր արքեպիսկոպոսություն, այժմ քանդված: Նահանգը մոտ է Ռաննի քաղաքին եւ Մեծ Հայքի Շիրակավան գավառին:

12. Derganavanch, Archiepiscopatus in Provincia Dergan inter Arzerum & Arsingam: subjecta Turcis est illa regio.

Դերջանավանք՝ Էրզրումի եւ Արսինտանի միջեւ, Դերջան գավառում: Շրջանը բաժան-բաժան է եղած թուրքական տարբեր իշխանությունների միջեւ:

13. Fahrapat, vel Ferah-bat, vel Ferawavu, Archiepiscopatus, vel potius Episcopatus in Provincia Mansanderam.

Ֆահրապատ կամ Ֆերահ-բադ, կամ Ֆերահվավ՝արքեպիսկոպոսական կամ եպիսկոպոսական աթոռ Մազանդարան գավառում[38]:

---

[34] Կեսարիայի հայտնի Տէրէվանքն է՝ Կեսարիայից մեկուկես ժամ հեռու դեպի արեւելք. տես **Տրդատ եպս. Պալեան**, Հայ վանորայք, Ս. Էջմիածին, 2008, էջ 79:

[35] Հասկանալի է, որ խոսքը Գլակայ կամ Ինակեան վանքի մասին է, որը հայտնի է նաեւ «Մատնէվանք» անվամբ. տես **Հ. Համազասպ Ոսկեան**, Տարօն-Տուրուբերանի վանքերը, Վիեննա, 1953, էջ 136:

[36] Բիթլիսում այս ժամանակահատվածում կար չորս եկեղեցի, որոնցից մեկն էր նաեւ Ծպրկորու Ս. Հովհաննես եկեղեցին:

[37] Երզնկայի գավառի Սպեր գավառակ:

[38] Ժամանակի ուղեգիրների ու աշխարհագրագետների տեղեկությանց համաձայն՝ Ֆերահբադը պարսից շահերի նստավայրերից մեկն էր՝ Նոր Ջուղայից ոչ հեռու: Հմմտ. **Dom Joseph Vaisette**, Géographie historique, ecclesiastique et civile, t. 9, Paris, 1755, էջ 463: Ոսկան Երեւանցու հաղորդած տեղեկությունը կարիք ունի ճշգրտման. Ֆերահբադը

14. Surb-Grigor, id est, S. Gregorius, Archiepiscopatus, idem qui vocatur Lusavaric, &idem Monasterium in Provincia Carin vel Arzerum. Vocatur quoque Archiepiscopatus Arzerum, nam Monasterium Lusavaric distat tantùm leucâ versus Orientem ab Arzerum.

Սուրբ Գրիգոր, որ է Լուսավորիչ, եւ նույնանուն մի վանք Կարին կամ Էրզրում գավառում: Կոչվում է նաեւ Էրզրումի արքեպիսկոպոսություն, իսկ Լուսավորիչ վանքն Էրզրումից հեռու է մեկ ժամով՝ դեպի արեւելք:

1. Surb Astuasasin S. Dei Genitrix, Episcopatus in Provincia Karin: distat autem 4. leucis versus Orientem Septentrionalem ab Arzerum.

ա. Սուրբ Աստվածածին՝ Կարին գավառում՝ Էրզրումից հյուսիս-արեւելք չորս ժամ հեռավորությամբ.

2. Ginisuvanch, Episcopatus sub Turcis: distat 8. leucis versus Occidentem ab Arzerum.

բ. Ջինիշուվանք՝ թուրքերի իշխանության տակ, գտնվում է Էրզրումից արեւելք՝ ութ ժամ հեռավորությամբ.

3. Mamruanavanch, Episcopatus in Provincia Mamruam prope civitatem Ohtic.

գ. Մամրվանավանք՝ Մամրվան գավառում, Օհթիք [Օլթի] քաղաքի մոտակայքում.

15. Hacbat, Archiepiscopatus magnus in Provincia Armeniae Fascir, vulgò Lorri: distat Hacbat 20. leucis circiter versus Meridiem Orientalem à Tiplis. Habet Suffraganeos.

Հաղբատ. մեծ մի արքեպիսկոպոսություն Հայաստանի Ֆասկիտ կամ ժողովրդական լեզվով Լոռի գավառում: Հաղբատը մոտավորապես Թիֆլիսից հարավ-արեւելք է՝ քսան ժամ հեռավորությամբ: Ունի հետեւյալ քորեպիսկոպոսությունները՝

1. Goruvanch, Episcopatus in Provincia Gori prope civitatem Gori in regione Georgianorum.

ա. Գորովանք՝ Վրաստանի Գորի գավառում՝ Գորի քաղաքի մոտակայքում.

2. Hacartinwanch, Episcopatus deletus.

բ. Հաղարծնի վանք. ներկայումս այլեւս եպիսկոպոսական աթոռ չէ.

3. Macaravanch, Episcopatus deletus.

գ. Մակարավանք. ներկայումս այլեւս եպիսկոպոսական աթոռ չէ.

գտնվում էր Իրաք-Ադջեմի կամ Ադջեմի նահանգում, որի մաս էին կազմում՝ հյուսիսում՝ Ազերբայդջանը, Գիլանը եւ Մազանդարանը, արեւելքում՝ Խորասանը, հարավում՝ Ֆարսիստանն ու Խուժիստանը, իսկ արեւմուտքում՝ Քուրդիստանն ու Իրաք Արաբին (Արաբական Իրաք). տես **Dom Joseph Vaisette,** նշվ. աշխ., էջ 455: Այսպիսով՝ Մազանդարան անվանումը պարզապես այդ նահանգներից մեկի հետ շփոթության արդյունք է:

16. Hamith, Archiepiscopatus, seu Caracmit, sed Syri, Chaldaei & Armeni vocant tantùm Hamith. Car, linguâ vulgari significat nigrum ; & quia sita est ad radicem montis in quo sunt multae partes nigrae, ideo dicitur Car-Hamith. Armeni volunt esse antiquam Tigranatensem. Ibi sedet quoque Patriarcha Syrorum Jacobitarum ab anno 1662. qui sedebat antè in Orfa. Sedet quoque ibi Suffraganeus Episcopus Patriarchae Nestorianorum, qui nunc sedet in Elchong, 8. leucis distante versus Septentrionem à Mozul seu Ninive antiqua, ut sert illorum Traditio. Habet Suffraganeos Episcopos.

Համիդ, որ է Կարաքմիտ, չնայած ասորիները, քաղդեացիներն ու հայերը միայն Համիդ են անվանում: «Քար» ժողովրդական լեզվով նշանակում է «սեւ», եւ քանի որ շրջակայքում լեռները մեծավ մասամբ սեւ են, այդտեղից էլ Քար-Համիդ անվանումը: Հայերը դեռեւս հնուց այն անվանում են Տիգրանակերտ: Այստեղ էին նստում ասորի Հակոբիկյան պատրիարքները մինչեւ 1662 թ., երբ այնուհետեւ տեղափոխվեցին Ուրֆա: Այստեղ էր նաեւ նեստորական պատրիարքի քորեպիսկոպոսների աթոռը, որն այժմ էլքոնգում է՝Մոսուլից (հին Նինվե քաղաքի մոտակայքում) հյուսիս՝ 8 ժամ հեռավորությամբ, որը նրանց ավանդական նստավայրն էր: Ունի քորեպիսկոպոսություններ՝

1. Ael, vel Agel, distat unâ leucâ ab Hamith.

ա. Ագել՝ Համիդից մեկ ժամ հեռավորության վրա:

2. Arcni, distat 2. diebus ab Hamith.

բ. Արզն կամ Արծն՝ Համիդից հեռու է երկու օրվա ճանապարհ:

3. Balu, Episcopatus distat ab Hamith 3. diebus.

գ. Բալու՝ Համիդից հեռու է երեք օրվա ճանապարհ:

4. Edesia Episcopatus, distat 4. diebus ab Hamith versus Meridiem Occidentalem.

դ. Եդեսիա՝ Համիդից հեռու է չորս օրվա ճանապարհ դեպի հարավարեւմուտք:

5. Germuc Episcopatus, 3. diebus distat ab Hamith.

ե. Ջերմուկ՝ Համիդից հեռու է երեք օրվա ճանապարհ:

6. Merdin Episcopatus, Oreientis Meridionalis respectu Hamith.

զ. Մարդին՝ Համիդից համապատասխանաբար հարավ-արեւելք:

7. Senchuse, Episcopatus distans ab Hamith 4. diebus.

է. Սանջակ՝ Համիդից հեռու է չորս օրվա ճանապարհ:

8. Tulguran Episcopatus, distat ab Hamith 2. diebus.

ը. Թուլգուրան՝ Համիդից հեռու է երկու օրվա ճանապարհ:

17. Harberdu, vel Harberd Archiepiscopatus in Provincia Harberd, Ecclesia aut Monasterium est Surb-Astasasin prope Hamith ipsi Occidentalem: habet sub se 4. Episcopatus & 3. Conventus, quorum nomina ignorabat D. Archiepiscopus Uskan.

Խարբերդ՝ համանուն գաւառում վանք եւ եկեղեցի՝ Սուրբ Աստվածածին՝ Համիդին մոտ է արեւմուտքից: Ունի չորս եպիսկոպոսություն եւ երեք վանք, որոնց անունները Ոսկան արքեպիսկոպոսը չգիտեր:

……[39]

18. Hispahan, vulgò Armenis Sphuhun, Archiepiscopatus, regia civitas Persarum à tempore tantùm Scha-Abas, qui Armenos plurimos collegit in parte civitatis, aut suburbio quod dicitur Gulfa, aliis Ciolfa, in quo sunt Armenorum Ecclesiae 20.

Իսֆահան՝ հայերի լեզվով՝ Սպահան: Պարսից տերության մայրաքաղաք Շահ-Աբասի ժամանակ, որը մեծ թվով հայերի բերեց քաղաքի արվարձանները եւ հիմնեց թաղամաս՝ Ջուղա կամ Ջուլֆա, որտեղ կան հայկական քսան եկեղեցիներ.

ա. Surb-Astuasasin, Ս. Աստվածածին, բ. Surb-Nicolaus, Ս. Նիկողայոս, գ. Surb-Jacub, Ս. Հակոբ, դ. Surb-Amenaphreic, id est, omnium redemptor, & est Monasterium S. Basilii, Ս. Ամենափրկիչ, որը նաեւ վանք է՝ Բարսեղյան կանոնադրությամբ, ե. Surb-Grigor, Ս. Գրիգոր, զ. Surb-Johan, Ս. Հովհաննես, է. Amirrasthenesi, Ամիրաց թեռեփ, ը. Karametichenc, Կարապետիչենց, թ. Portuens, Պորտվանաց, ժ. Norascen, Նորաշեն, ժա. Karachein, Կարաքին, ժբ. S. Jacub, Ս. Հակոբ, ժգ. Anapatinn, Անապատինն, ժդ. Erevaneseos magnus, Երեւանեցոց մեծ, ժե. Erevaneseos minor, Երեւանեցոց փոքր, ժզ. Gazge, Գալգե, ժէ. Schsapanin, Զափանին, ժը. Ckocinn, Զքոյինն, ժթ. Est Conventus Monialium, Միանձնուհիների մի վանք, ի. Chogia Abedik, Խոջա Ավետիք:

In Gulfa vel Ciolfa & Erevan, villa vicina Hispahan, sunt circiter octo mille Armeni sere omnes mercatores. Habet Suffrageneos

Ջուղայում կամ Ջուլֆա-Երեւանում (Իսֆահանի մի արվարձան) կա մոտավորապես ութ հազար հայ՝բոլորն էլ առեւտրականներ: Ունի նաեւ քորեպիսկոպոսություններ.

1. Pharia, Episcopatus versus Occidentem distat ab Hispahan tribus circiter diebus.

ա. Փերիա՝ Սպահանից մոտ երեք օրվա ճանապարհ դեպի արեւմուտք.

Բ. ……

Գ. ……[40]

---

[39] Բնագիրն այս մասում կիսատ է. հավանաբար, գրի չի առնվել Ռիչարդ Սիմոնի կողմից, եւ կամ, ինչպես արդեն նշվում է, դրանց մասին Ոսկան Երեւանցին չուներ համապատասխան տեղեկությունները:

[40] Բնագիրը բացակայում է:

19. Karmiuvanch Archiepiscopatus, id est, ruber Conventus, quia lapides sunt rubri, est in Provincia Ecegazor: distat ab Erevan & Naxuvan 2. diebus. Habet Suffraganeos

Կարմրավանք, որի քարերը կարմիր են. Եղեգնաձորի գավառում է՝ Երեւանից ու Նախիջեւանից երկու օրվա ճանապարհ հեռավորությամբ: Ունի քորեպիսկոպոսություններ՝

1. Capisvanch, Episcopatus & Monasterium S. Basilii propè civitatem Capis, quae nunc est deserta

ա. Կապիսվանք՝ եպիսկոպոսություն եւ Ս. Բարսեղի կանոնադրությամբ վանք Կապիս քաղաքի մոտակայքում, որն այժմ անապատի է վերածված[41]:

2. Caputusvanch, id est, caerulei coloris Monasterium aut atri in Provincia ecegazor: nunc non est Episcopatus, sed tantium Monasterium: olim erat Episcopatus.

բ. Կապուտավանք, որ է Կապույտ վանք՝ քարերի գույնի պատճառով. գտնվում է Եղեգնաձորում: Այժմ այլեւս եպիսկոպոսություն չէ՝ չնայած ունի բազմաթիվ վանքեր *(olim erat Episcopatus):*

3. Derbavanch, Episcopatus Provinciae Ecegazor.

գ. Դերբավանք՝ Եղեգնաձորի գավառում գտնվող եպիսկոպոսություն[42]:

4. Hermonivanch, Episcopatus Provinciae Ecegazor

դ. Հերմոնավանք՝եպիսկոպոսություն Եղեգնաձորի գավառում:

5. Azpter, Episcopatus Provinciae Sahbunisszor: distat ab Erevan versus Orientem circiter 20. leucis.

ե. Ածպտեր՝ Շահապունիք գավառում գտնվող եպիսկոպոսություն է՝ Երեւանից մոտ քսան ժամ դեպի արեւելք[43]:

20. Machienusvanch, Archiepiscopatus propè villam Machienus in Provincia Gelarchuni: distat versus Orientem 15. leucis circiter ab Erevan: nullos habet sub se Episcopatus, quia sunt destructi & Monasteria.

---

[41] Գտնվում է պատմական Վայոց ձոր գավառում, հայտնի է եղել իբրեւ գրչության նշանավոր կենտրոն՝ Կապից ուխտ անունով՝ ըստ 1613 թ. նույն վանքում գրչագրված ձեռաց Մաշտոցի. տես «Ցուցակ ձեռագրաց», հ. Բ., խմբ.՝ Լ. Խաչիկյան, Ա. Մնացականյան, Երեւան, 1970, էջ 202. հմմտ. նաեւ «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. Բ., Երեւան, 1988, էջ 905:

[42] Վանքի աշխարհագրական դիրքն անորոշ է: Դատելով Ոսկան Երեւանցու հաղորդած տեղեկությունից՝ հավանաբար գտնվել է պատմական Դարբն կամ Դերբ գյուղերի մոտակայքում՝ Արփայի ձախ վտակ Դարբ գետի ձախ ափին. հմմտ. «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. Բ., էջ 86:

[43] Աշխարհագրական դիրքն անորոշ է. տես «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. Ա., Երեւան, 1986, էջ 129:

Մաքենոցվանք՝ Գեղարքունիքի գավառի Մաքենիս քաղաքի մոտ գտնվող արքեպիսկոպոսություն, Երեւանից հեռու է տասնհինգ ժամ դեպի արեւելք: Ոչ ոք չի ապրում այստեղ, քանզի ե՛ւ եպիսկոպոսարանը, ե՛ւ վանքն ավերված են:

21. Macu, Archiepiscopatus magnus in Provincia Artaz: in Cathedrali Ecclesia est corpus S. Thaddaei. Habet sub se

Մակու՝ Արտազ գավառում գտնվող մեծ արքեպիսկոպոսություն է: Եկեղեցու Մայր Տաճարում է գտնվում Սուրբ Թադեոսի աճյունը: Ունի հետեւյալ քորեպիսկոպոսությունները.

1. Auhar, Episcopatus: distat versus Meridiem Orientalem à Macu 5. diebus.

ա. Ավհար-Ավշար՝ Մակուից հինգ օրվա հեռավորության վրա դեպի հարավ-արեւելք:

2. Hoi, Episcopatus: distat versus Meridiem à Macu 2. diebus.

բ. Խոյ՝ Մակուից երկու օրվա հեռավորության վրա դեպի հարավ:

3. Jormi, Episcopatus: distat unâ die à Tabris, tribus verò versus Orientem Meridionalem à Macu.

գ. Ջորմի՝ Թավրիզից հեռու է մեկ օրվա ճանապարհի չափով՝ Մակուից դեպի հարավ-արեւելք տանող ճանապարհի վրա:

4. Maratha, Episcopatus ad Occidentem Tabris. Ibi sedebat Episcopus Italicus à 300. annis, & vertit multos libros Armenicè, & fecit multos Vardapiet.

դ. Մարաղա՝ Թավրիզի արեւմուտքում: Այստեղ երեք հարյուր տարի է, ինչ հաստատվել է իտալական եպիսկոպոս: Գրվել են բազմաթիվ գրքեր հայերենով, կան բավական շատ վարդապետներ[44]:

5. Salmast, Episcopatus propè Maraga.

ե. Սալմաստ՝ Մարաղայի մոտակայքում:

22. Surb-Narcavea, id est, S. primus Martyr Stephanus, Archiepiscopatus versus Meridiem Occidentalem: distat 12. leucis à Naxuvan: Suffraganeos habebat olim multos & Monasteria; sed praeter Astapat omnia sunt destructa. Olim Gulfa d'Hispahan erat ditione Archiepiscopi,

Ս. Նախավկա, որ է Ս. Ստեփանոս Նախավկա. հարավ-արեւելքում գտնվող արքեպիսկոպոսություն՝ Նախճավանից տասներկու ժամ հե-

[44] Սույն տեղեկագրի ստեղծումից երեք հարյուր տարի առաջ՝ 1378 թ., կամ դրանից մի քանի տասնամյակ առաջ, Արտազում եւ Նախիջեւանում հաստատվում են, այսպես կոչված, ունիթորները՝ Հռոմի հետ միութենական հաղորդության մեջ գտնվող հայերը: Դոմինիկյան եղբայրներից ընտրված նրանց առաջնորդներից առավել հայտնին Բարդուղիմեոս Մարաղացին էր, այլուստ հայտնի Բոնոնացի մականունով (մահ.՝ 1333 թ.): Այս մասին ավելի մանրամասն տես **Լ. Խաչիկյան**, Արտազի հայկական իշխանությունը եւ Ծործորի դպրոցը, ԲՄ, 1973, ԺԱ., էջ 146-156:

ռավորության վրա: Իր ենթակայության տակ ունի բազմաթիվ վանքեր ու քորեպիսկոպոսներ, որոնցից Աստապատը, սակայն, ամբողջությամբ ավերված է: Իբրեւ արքեպիսկոպոսություն՝ կանգուն է միայն Ջուղան.

1. Astapat, vel Surb-Stephan, cui Ecclesia est dicata.

Ա. Աստապատ, Ս. Ստեփանոս[45]***.***

2. Nachiovan.

Բ. Նախճավան

……[46]

23. Surb-Uscan, id est, signum Stae. Crucis, quia ibi est pars Sanctae Crucis: est idem Archiepiscopatus quàm Sebaste sub Turcis. Habet sub se

Ս. Նշան, որ նշանակում է Ս. Խաչ, այսինքն՝ այստեղ կա Ս. Խաչի մասունք: Այստեղ է Սեբաստիայի արքեպիսկոպոսությունը, որը գտնվում է թուրքերի իշխանության տակ: Քորեպիսկոպոսություններ՝

1. Azptiruvanch, episcopatus Provinciae Ascharu.

ա. Ածպտիրուվանք՝ Աշկարի (?) գավառում[47]***:***

2. Andreasic, Episcopatus Provinciae Acscan : Ecclesia est Surb-Astuasasin.

բ. Անդրեասից՝ Ակսկան (?) գավառում՝ Ս. Աստվածածին եկեղեցիով[48]***:***

3. Surb-Hresctacapet, id est, S. Archangelus, Episcopatus in Sebastia.

գ. Ս. Հրեշտակապետաց, գտնվում է Սեբաստիայում:

24. Sanachim, Archiepiscopatus in Provincia Tascir, vel Lorri, versus Tiplis: qui erant sub illo Episcopatus & Conventus, sunt destructi.

Սանահին՝ Տաշիր-Լոռի գավառում՝ Թիֆլիսի ուղղությամբ: Արքեպիսկոպոսություն է. ժամանակին ուներ բազմաթիվ արքեպիսկոպոսություններ ու վանքեր: Այժմ բոլորն էլ կործանված են:

25. Scammachi, vel Acuanic, Archiepiscopatus propè mare Caspium: qui erant sub eo Episcopatus & Conventus, sunt destructi.

Շամախի՝ Աղվանից՝ Կասպից ծովի ավազանում գտնվող արքեպիսկոպոսություն. ժամանակին բազմաթիվ եպիսկոպոսություններ ու վանքեր ուներ, այժմ՝ կործանված:

---

[45] Գտնվում է Նախիջեւանում, հայտնի է եղել նաեւ Կարմիր վանք, Քարատակի վանք, Խնդրակատարի վանք, Քարատակի Ս. Աստվածածին վանք անուններով. տես RMA, էջ 145:

[46] Բնագիրը բացակայում է:

[47] Այս անունով վանքը հայտնի է նաեւ Թաղաադիվանք, Ալթու վանք անուններով. տես RMA, էջ 78. հմմտ. նաեւ **Տրդատ եպս. Պալեան**, նշվ. աշխ., էջ 96:

[48] Սեբաստիայի շրջանում «Անդրեասից» անվանումով հայտնի է Ս. Յովակիմ Աննայի կամ Ս. Աստվածածին վանքը՝ Եվդոկիայից ոչ շատ հեռու՝ Պիսկենի գյուղի մոտակայքում. տես **Հ. Ոսկեան**, Սեբաստիայի, Խարբերդի, Տիարպէքիրի եւ Տրապիզոնի նահանգներու վանքերը, Վիեննա, 1962, էջ 10-11:

26. Tathevanch, Archiepiscopatus magnus in Provincia Kapan. Habet sub se

Տաթեւի վանք՝ Կապան գավառում գտնվող մեծ արքեպիսկոպոսություն: Ունի հետեւյալ քորեպիսկոպոսությունները՝

1. Mecri Episcopatum.

ա. Մեծիրանց,

2. 3. 4. Sunt alii Episcopatus, quorum non recordatur D. Uskan.

Բ., Գ., Դ., այլ եպիսկոպոսություններ էլ կան, որոնց անունները Ոսկանը չի գրանցել:

Habet etiam Archiepiscopatus Tathevanch sub se Monasteria.

Արքեպիսկոպոսի իշխանության տակ են հետեւյալ վանքերը՝

1. Surb-Karapiet,

ա. Ս. Կարապետ վանքը.

2. Tanzapharac.

բ. Տանձափարախը[49].

3. Vagathevavanch

գ. Վաղատնիվանք[50].

4. Anapat, in quo sunt plusquam centum Eremitae in deserto.

դ. Անապատ, որտեղ ապրում են հարյուրավոր ճգնավորներ[51].

5. 6. Duo Conventus Monialium, unus Scriher, alius Zanzaparach.

Ե., զ. Կուսանաց երկու վանք՝ Շրիհեր[52] եւ Ցանցափարախ[53].

27. Thivatavanch, id est, S. Anna, Archiepiscopatus propè civitatem Thucat vicinam Amasiae, olim Eudochia versus Occidentem Septentrionalem, distat ab Egmiathin 150. leucis circiter. Habet sub se

Թոխատավանք՝ Ս. Աննա, Ամասիա-Թոխատում գտնվող արքեպիսկոպոսություն, նախկին Եվդոկիան է՝դեպի հարավ-արեւմուտք՝ Էջմիածնից հարյուր հիսուն ժամ հեռավորության վրա: Ունի հետեւյալ քորեպիսկոպոսությունները՝

---

[49] Ավելի շատ հայտնի է «Բեխի անապատ» անունով՝ Բեխի գյուղից հարավ-արեւելք, խիտ անտառում: Տանձափարախն այս վանքի հին անունն է՝ վկայված Ստեփանոս Օրբելյանի կողմից. տես **Մ. Հասրաթյան**, Սյունիքի XVII-XVIII դարերի ճարտարապետական համալիրները, Երեւան, 1973, էջ 43-45:

[50] Վաղատնիվանքը Որոտնավանքի անվանումներից մեկն է. տես RMA, էջ 130:

[51] Խոսքը Հարանց Մեծ անապատի մասին է:

[52] Խոսքը Սյունյաց Շնհերի Կուսանաց անապատի մասին է՝ Որոտանի անդնդախոր ձորի քարափներից մեկի գլխին: Վանքի Ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել է 1676 թ.՝ Ագուլիսցի Մահտեսի Ազարիայի կողմից. տես **Մ. Հասրաթյան**, նշվ. աշխ., էջ 33:

[53] Հավանաբար, կրկին նկատի ունի Տանձափարախը, որն այդ ժամանակաշրջանում հայտնի վանական համալիր էր:

1. Nazianzenum, Episcopatus sub Turcis

ա. Նազիանզ՝ գտնվում է թուրքերի իշխանության տակ;

2. Marzuanavanch, Episcopatus Provinciae Marzuan sub Turcis.

բ. Մարզվանավանք՝ Մարզվան գավառում՝ նույնպես թուրքերի իշխանության տակ:

3. Neucaesaria, Episcopatus sub Turcis.

գ. Նեոկեսարիա՝ նույնպես թուրքերի իշխանության տակ:

28. Van, Archiepiscopatus magnus, idem qui & Varach, est Conventus in quo sedet Archiepiscopus, & Van est civitas vicina juxta Lacum magnum Varaspuracani. Habet sub Suffraganeos

Վան՝ մեծ արքեպիսկոպոսություն: Այստեղ է նաեւ Վարագավանքը, ինչպես նաեւ Վան քաղաքը՝ Վասպուրականի մեծ լճի դիմաց: Ունի հետեւյալ քորեպիսկոպոսությունները՝

1. Arces, vel Arciscuvanch, Episcopatus, seu Argens prope Lacum magnum.

ա. Արճեշ, Արճիշավանք՝ մեծ լճի ափին:

2. Clath, Episcopatus, seu Chelath juxta Lacum.

բ. Խլաթ՝ լճի դիմաց:

3. Ctusuvanch, vel Ctus, juxta Lacum versus Occidentem: ibi sunt tres Conventus Monachorum & Eremitarum, quibus praest Episcopus.

գ. Կտուցի վանք՝ լճից արեւմուտք: Ունի երեք կուսանաց եւ միանձանց անապատ, որի գլուխ կանգնած է եպիսկոպոսը:

4. Lim in ipso Lacu versus Occidentem, Episcopatus

դ. Լիմ՝ լճի վրա է՝ դեպի արեւմուտք:

5. Ustan, Episcopatus versus Septentrionem laci Varaspuracani.

ե. Ոստան՝ Վասպուրականի լճից հարավ:

6. Husanus Episcopatus

զ. (?),

7. S. Ephannivanch, Monasterium tantum prope Van.

է. (?), Վան քաղաքի մերձակայքում[54]:

29. Virap, id est, caverna vel abyssus, in qua S. Grigor latuit & vixit 13. annis : ibi celebratur Missa : est tantùm Episcopatus sub Egmiathin, à quo versus Meridiem Orientalem circa Ararath distat 12. leucis; sed dicitur Archiepiscopatus, quia sub se habet tres hos Conventus.

Վիրապ, որ է «խոր փոս», որտեղ բանտարկված է եղել Ս. Գրիգորը տասներեք տարի, եւ որտեղ մատուցվում է պատարագ: Էջմիածնի իշխա-

[54] Այս վերջին երկու վանքերի անունները՝ Husanus եւ S. Ephannivanch, մեզ չհաջողվեց ճշտել:

նութեան տակ է, որտեղից հեռու է տասներկու ժամ՝ դեպի Արարատ լեռը՝ հարավ-արեւելքով: Վանքի գլուխ կանգնած է արքեպիսկոպոսը՝երեք վանքով՝

1. Vanstan

ա. Վանստան,

2. Uzavanch

բ. Օձավանք[55]

3. Muscacbiuruvanch

գ. Մուսքացբյուրուվանք[56]*:*

Subscripsi Uscanus Episcopus Uscavanch & Vardapiet, ac Vicarius generalis in Armenia, sigillumque apposui.

Ստորագրություն՝

Ոսկան Եպիսկոպոս Ուշավանեցի Վարդապետ, ընդհանուր փոխանորդ Հայոց ……/կնիք/……

[55] Պետք է ընթերցել Ուրցավանք:
[56] Պետք է ընթերցել Մյուսաղբյուրուվանք: